ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ԵՐԿՐԱՊԱՀԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ երկրապահներ, ջերմորեն շնորհավորում եմ բոլորիդ այս կարևոր օրվա կապակցությամբ:

Հայաստանի Հանրապետության պետականության և անվտանգության պահպանման գործում անհերքելի է երկրապահ կամավորականների դերը:

Դուք եք, որ մեր հայրենիքի համար բախտորոշիչ պահին անշահախնդրորեն ծառայել եք նրան՝ չխնայելով ձեր անձնական կյանքն ու անվտանգությունը:

Հայաստանի Հանրապետության անկախության և խաղաղության համար մղված բոլոր պայքարներում դուք եղել եք առաջամարտիկը, ձեր զենքերը շողացել են հայոց բոլոր ազատամարտերում: Ձեր տները դարձել են հայոց սահմանները, անուրանալի սերը՝ հայրենիքը:

Խոնարհումս այն բոլոր երկրապահ կամավորականներին, ովքեր ծառայում են հայրենիքին ինչպես պատերազմի, այնպես էլ խաղաղության ժամանակ:

Երիցս փառք ձեզ:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան